



Կարգապահական գործ թիվ ԿԳ-14064

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի փետրվարի 18-ի թիվ 54-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/51-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՇԱՎԻՐ ԽԱԼԱՓՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Հարություն Հարությունյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,

քննության առնելով փաստաբան Արշավիր Խալափյանին (արտոնագիր թիվ 731) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

05.05.2014թ-ին Պալատ է մուտքագրվել ՀՀ քաղաքացի Աշոտ Արամի Կույունջյանի ներկայացուցիչ, Լեոնային Ղարաբաղի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան Արթուր Սերժիկի Գևորգյանի (**այսուհետ նաև Դիմող**) դիմումը, որով վերջինս հայտնել է, որ Կապան քաղաքի բնակիչ Աշոտ Կույունջյանը 2014 թվականի մայիսի 1-ին լիազորել է իրեն մասնակցելու Աշոտ Կույունջյանի կողմից ինքնակամ կառուցվող ավտոտնակի վերաբերյալ Կապանի քաղաքապետարանում հարուցված վարչական վարույթի:

Դիմողը նշել է, որ իրեն է ներկայացվել պատահաբար տեսաձայնագրված սկավառակ այն մասին, որ հակառակորդ կողմ հանդիսացող Պալատի անդամ, փաստաբան Արշավիր Խալափյանը (արտոնագիր թիվ 731) շորթման և սպառնալիքների միջոցով փորձում է իրենից գումար կորզել՝ երաշխիք տալով նշված վարչական վարույթում պահպանել պասիվություն, իսկ իր վստահորդներին բնութագրում է որպես իրավաբանորեն ոչ գրագետ անձինք, որոնք չեն կարող առանց իր ակտիվ մասնակցության շարունակել վարույթը: Դիմումին կից ներկայացվել է տեսասկավառակ:

Արթուր Գևորգյանը խնդրել է Պալատի նախագահին սկավառակում նշված գործողություններին համարժեք գնահատական տալ:

Վերոնշյալից բացի, Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի 14.05.2014թ տրամադրած տեղեկատվության համաձայն www.news.am լրատվական կայքում 14.05.2014թ. ժամը 16:51 րոպեին կատարվել է հետևյալ հրապարակումը¹՝

Վերնագիրը՝ ««Դիմակազերծող» տեսանյութ Կապանից. կոռուպցիայի դեմ պայքարող փաստաբանը կաշառք է պահանջում».

«Դիպել 4:11 րոպեից

Համացանցում մայիսի 13-ին սենսացիոն տեսանյութ է տեղադրվել՝ «Ինչպես է Խալափյանի դիմակը պատռվում: Նվեր բոլոր նրանց, ում այս սողունը վատություն է արել» վերտառությամբ:

Տեսանյութում կաշառք պահանջող Արշավիր Խալափյանը Կապանում հայտնի փաստաբան է, առավել ևս, «Հակակոռուպցիոն կենտրոնի» համակարգող է եղել:

Տեսանյութի հեղինակ Աշոտ Կոյունջյանը Կապանի NEWS.am-ի հետ զրույցում պատմեց, որ դիմել է քաղաքապետարան՝ իր սեփական հողամասում ավտոտնակի կառուցապատման թույլտվություն ստանալու համար, սակայն չսպասելով համապատասխան փաստաթղթերին սկսել է աշխատանքները:

Նույն՝ Ռաֆայել Մինասյան 17 հասցեում է գտնվում նաև «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի Սյունիքի մարզային մասնաճյուղի նախագահ Արշավիր Խալափյանի սեփականությունը, սակայն Կոյունջյանի համոզմամբ, դրանք իրար բացարձակապես չեն խանգարում:

Այնուհանդերձ, Խալափյանը մի քանի դիմում է ներկայացրել քաղաքապետարան՝ բնակիչների անունից բողոքելով, որ ավտոտնակի կառուցման աշխատանքները դադարեցվեն: Շենքի բնակիչները, սակայն, ստորագրել են, որ համաձայն են, որ Աշոտ Կոյունջյանը ավտոտնակ տեղադրի: Խալափյանի հետ պարաձայնությունը հարթելու համար Կոյունջյանը հանդիպում է կազմակերպել և գաղտնի նկարահանել, թե ինչպես է փաստաբանը դիմումի ընթացքը կասեցնելու համար 1500 ԱՄՆ դոլարին համարժեք բնամթերք պահանջում:

«Իմ նպատակն այն չէ, որ անվերջ կոռուպցիայի դեմ պայքարող փաստաբանը քրեական պատասխանատվություն կրի, միայն ցանկացել եմ նրա դիմակը պատռել», - ասաց Կոյունջյանը:

Արշավիր Խալափյանը հրաժարվեց որևէ մեկնաբանություն տալուց, NEWS.am-ի հետ հեռախոսազրույցում նա միայն ասաց. «Առայժմ ձեռնպահ եմ մնում որևէ մեկնաբանություն տալուց, բայց այդ քայլը անհետևանք չի մնա»:

Նշված տեսանյութը տեղադրվել է նաև www.youtube.com կայքէջում՝ «Ինչպես է Խալափյանի դիմակը պատռվում: ...» վերտառությամբ²:

Դիմումի կապակցությամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 2014 թվականի մայիսի 14-ի թիվ 171-Ա/ԿԳ-14064 որոշմամբ փաստաբանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրի (այսուհետ՝ նաև Կանոնագիրը) 2.2.2., 2.2.3., և 2.6.1 կետերի հատկանիշներով: Կարգապահական վարույթի իրականացումը հանձնարարվել է

¹ <http://news.am/arm/news/209145.html>

² http://www.youtube.com/watch?v=H_Gih-e4nig#t=32

կարգապահական գործ նախապատրաստող, փաստաբան Վահագն Բաբայանին:

2014 թվականի հուլիսի 21-ին կարգապահական գործի նյութերը հանձնվել են խորհուրդ:

Խորհրդում թիվ 14-064 կարգապահական գործի քննության ընթացքում հայտնի է դարձել, որ 2014 թվականին ուստիկանության նախկին ՔԳՎ Սյունիքի մարզի քննչական բաժնում հարուցվել է և Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ 41106514 քրեական գործը, ըստ որի փաստաբան Արշավիր Խալափյանը, ստանձնելով Սյունիքի մարզի, Սյունիք համայնքի բնակիչներ Հ. Մարգարյանի և Է. Կարապետյանի շահերի պաշտպանությունը, վերջիններիս ենթադրյալ իրավունքների խախտման կապակցությամբ հաղորդում է ներկայացրել իրավապահ մարմիններին՝ համայնքի Հին գերեզմաններ կոչվող վայրում համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանի կողմից գերեզմանատեղեր ապօրինի հատկացնելու վերաբերյալ, որի հիման վրա հարուցվել է 41101714 քրեական գործը: Նշված քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 2014 թվականի մարտին, Կապանի «Դարիստ» հյուրանոցային համալիրում հանդիպել է Ս. Սարգսյանի որդուն՝ Սարմեն Սարգսյանին և վերջինիցս ապօրինի կերպով պահանջել 10.000 ԱՄՆ դոլար, խոստանալով դրա դիմաց ի վնաս վերջինիս հոր գործողություններ չկատարել, նոր բողոքներ չներկայացնել, ինչպես նաև իր իսկ վստահորդներին մոլորության մեջ գցելու եղանակով, նախկինում ներկայացված դիմումների ելքերով չհետաքրքրվել և դրանց ընթաց չտալ:

Բացի այդ Արշավիր Խալափյանը 07.04.2014 թվականին նախ որպես Կապան քաղաքի Ռ.Մինասյան փողոցի 17 շենքի բնակիչ գրավոր դիմել է Կապանի քաղաքապետարան՝ Աշոտ կույումջյանի կողմից նշված հասցեին հարակից տարածքում ապօրինի շինարարություն կատարելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար, իսկ 18.04.2014-ին որպես ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ Սյունիքի մարզային մասնաճյուղի նախագահ և Սյունիքի հակակոռուպցիոն կենտրոնի համակարգող, դարձյալ նույն նպատակով՝ հերթական դիմումն է ներկայացրել քաղաքապետարան, որից հետո 2014 թվականի մայիսի 1-ին վերոհիշյալ հյուրանոցային համալիրի թիվ 210 սենյակում հանդիպել է Ա. Կույումջյանին ու իր կողմից ներկայացված դիմումների ընթացքի վերաբերյալ գործողություններ չկատարելու, այն է հետևողականություն չցուցաբերելու, նոր դիմումներ չներկայացնելու, ավելի խիստ վարչական պատասխանատվության ենթարկվելու համար խնդիրներ չառաջացնելու դիմաց, Աշոտ կույումջյանից, որպես կաշառք ապօրինի պահանջել է 1500 ԱՄՆ դոլար:

Ելնելով վերագրյալից Խորհուրդը գտել է, որ թիվ 14-064 կարգապահական գործի և վերոհիշյալ քրեական գործի հանգամանքները նույնն են, ուստի 14-064 կարգապահական գործի քննությունն անհնարին է մինչև թիվ 41101714 քրեական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի 26 հոդվածի առաջին մասի 7-րդ կետի համաձայն կարգապահական վարույթը ենթակա է կասեցման, եթե անհնարին է տվյալ կարգապահական գործի քննությունը մինչև սահմանադրական,

քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը:

Նկատի ունենալով վերգրյալը Արշավիր Խալափյանի նկատմամբ հարուցված թիվ 14-064 կարգապահական վարույթը կասեցնել մինչև թիվ 41101714 քրեական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

04.09.2019 թվականին Արշավիր Խալափյանը դիմել է Պալատ, հայտնել է, որ թիվ ՍԴ/0195/01/14 քրեական գործով 14.05.2017 թվականին կայացված Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության 1-ին աստիճանի դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով արդարացվել է և խնդրել է վերսկսել և ավարտել իր նկատմամբ հարուցված թիվ 14-064 կարգապահական վարույթը:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը և գործի կասեցումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 15.05.2014թ. թիվ 171-Ա/ԿԳ-14064 որոշմամբ փաստաբան Արշավիր Խալափյանի (արտոնագիր թիվ 731) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.2.2, 2.2.3, 2.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

26.09.2014թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդի անդամ Ալեքսանդր Սիրունյանին:

05.12.2014թ. թիվ ԿԳ 14064-Ա որոշմամբ Արշավիր Խալափյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կասեցվել է:

06.09.2019թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանին, ով 07.10.2019թ. հայտնել է ինքնաբացարկ:

04.11.2019թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդի անդամ Սիմոն Բաբայանին:

3. Դիմողի և Փաստաբանի համառոտ բացատրությունները, վկաների ցուցումները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն, որով հայտնել է, որ ինքն ընտանիքի հետ բնակվում է Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 17 շենքի 1 բնակարանում 2008 թվականից: Արշավիր Խալափյանին ճանաչում է ինը տարի, ունեն նորմալ, բայց ոչ ընկերական հարաբերություններ, մի քանի անգամ վերջինիս պարտքով որոշակի գումար է տվել: Փաստաբանը չի բնակվել Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի թիվ 17 հասցեում, վերջինս այդ տարածքը ձեռք է բերել երկու-երեք տարի առաջ և պատրաստվել է այն օգտագործել որպես գրասենյակ:

News.am-ի հետ զրույցում Դիմողն ասել է, որ իր բնակարանի անմիջապես հարևանությամբ գտնվում է հողամաս, որը տարիներ շարունակ եղել է աղբատեղի,

որն ինքն իր սեփական միջոցներով է մաքրել աղբից և բարեկարգել: Դիմողը երկու դիմում է ներկայացրել Կապանի քաղաքապետարանին՝ վերոնշյալ հողամասը ավտոտնակի վերածելու թույլտվության խնդրանքով: Դիմողը համայնքի ղեկավարի 2014 թվականի մայիսի 7-ի թիվ 410 որոշմամբ ենթարկվել է տուգանքի 400.000 (չորս հարյուր հազար) դրամի չափով:

Դիմողի տեղեկություններով Փաստաբանը 3-4 դիմում է ներկայացրել Կապանի քաղաքապետարան, Դիմողի նախաձեռնած շինարարական աշխատանքները դադարեցնելու պահանջով: Այնուհետև Փաստաբանը հանդիպումներ է նշանակել Դիմողի հետ և պահանջել գումար, որի դիմաց պարտավորվել է ներկայացված դիմումների ընթացքին հետամուտ չլինել և նոր դիմումներ չներկայացնել:

Պալատի խորհրդին նիստերին Դիմողը չի ներկայացել: Վերջինիս պատշաճ ծանուցել չի հաջողվել՝ փոստով ուղարկված բոլոր ծանուցումները վերադարձվել են:

3.2. Փաստաբանի համառոտ բացատրությունները.

Փաստաբանը խորհրդին բացատրություն չի ներկայացրել, խորհրդի նիստերին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

21.07.2014թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Վահագն Բաբայանը կազմել է եզրակացություն:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 24.12.2019թ ժամը՝ 19:15-ին և 18.02.2020թ ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գրանցվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,

հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Աշոտ Կույումջյանին է պատկանում սեփականության իրավունքով Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի 17 շենքի թիվ 1 բնակարանը: Սույն փաստը հաստատվում է թիվ 316476 սեփականության իրավունքի գրանցման վկայականով:

- 14.04.2014թ. Դիմողը դիմել է Կապանի քաղաքապետարան՝ խնդրելով տրամադրել տարածք ավտոտնակ կառուցելու համար:

- Աշոտ Ազատի Կույումջյանի նախաձեռնությամբ հրավիրվել է շենքի սեփականատերերի ժողով հարցման միջոցով: Ժողովը հավանություն (համաձայնություն) է տվել Կապան քաղաքի Ռ. Մինասյան փողոցի 17 շենքի հարակից տարածքում Աշոտ Ազատի Կույումջյանի կողմից ավտոտնակի կառուցմանը և տարածքի բարեկարգմանը: Սույն փաստը հաստատվում է «Լեռնագործ համատիրություն» համատիրության նախագահ ՍՀ. Բաղդասարյանի կողմից ներկայացված տեղեկանքով, որում նշված է 55 բնակիչների համաձայնությունն առ այն, որ վերջիններս չեն առարկում Աշոտ Կույումջյանի կողմից ինքնակամ շինությունը օրինականացնելուն:

- Արշավիր Խալափյանի կողմից Կապանի համայնքի ղեկավարին 05.05.2014թ., 15.05.2014թ., 19.05.2014թ., 21.05.2014թ., 07.07.2014թ. ներկայացվել է հարցումներ, որոնք վերաբերել են Դիմողի՝ ավտոտնակի օրինականացման դիմումին: Նշված փաստը հաստատվում է հարցումների օրինակներով և Կապանի քաղաքային համայնքի ղեկավարի 07.05.2014թ., 23.05.2014թ. և 14.07.2014թ. պատասխան գրություններով:

- Պալատի խորհրդի 05.12.2014թ. թիվ ԿԳ 14064-Ա որոշմամբ կարգապահական գործը կասեցվել է մինչև թիվ 41101714 քրեական գործով վերջնական դատական ակտ կայացնելը:

- 04.09.2019 թվականին Արշավիր Խալափյանը դիմել է Պալատ, հայտնել է, որ թիվ 41101714 քրեական գործով 14.05.2017 թվականին կայացված Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի օինական ուժի մեջ մտած դատավճռով արդարացվել է և խնդրել է վերսկսել և ավարտել իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը:

- Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ՍԴ/0195/01/14 14.05.2017թ. դատավճռով Արշավիր Խալափյանը ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

6. Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Արշավիր Խալափյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007թ., և 2014-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 15.05.2014թ. թիվ 171-Ա/ԿԳ-14064 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ Արշավիր Խալափյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետք՝ Օրենքի) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մատչելիություն):

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով վստահորդի նպաստավոր շահերից և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

Դիմողն ըստ էության Փաստաբանին է վերագրել իրենից շորթմամբ գումար պահանջելու վարքագիծը:

Արշավիր Խալափյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ «Արշավիր Խալափյանը 2014թ. ապրիլի 7-ին, նախ որպես Կապան քաղաքի Ռ.Մինասյան փողոցի 17 շենքի բնակիչ գրավոր դիմել է Կապանի քաղաքապետարան՝ Աշոտ Կոյունջյանի կողմից նշված հասցեին հարակից տարածքում ապօրինի շինարարություն կատարելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար, իսկ 2014թ. ապրիլի 18-ին, արդեն հանդես գալով որպես ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան, դարձյալ նույն նպատակով հերթական դիմումն է ներկայացրել քաղաքապետարան, որից հետո 2014թ. մայիսի 1-ին վերոհիշյալ հյուրանոցային համալիրի թիվ 210 առանձնասենյակում Աշոտ Կոյունջյանին ու իր կողմից ներկայացրած դիմումների ընթացքի վերաբերյալ գործողություններ չկատարելու, այն է՝ հետևողականություն չցուցաբերելու, նոր դիմումներ չներկայացնելու՝ ավելի խիստ վարչական պատասխանատվության ենթարկելու համար խնդիրներ չառաջացնելու, դարձյալ հանդես գալով որպես փաստաբան՝ Աշոտ Կոյունջյանից որպես կաշառք ապօրինի պահանջել է 1500 ԱՄՆ դոլար»:

Վերը նշված փաստի շուրջ հարուցված քրեական գործով 14.05.2017 կայացված ՍԴ/0195/01/14 դատավճռով Արշավիր Խալափյանը ՀՀ քրեական

օրենսգրքի 200-րդ հոդվածի 3-րդ մասով առաջադրված մեղադրանքում ճանաչվել է անպարտ և արդարացվել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Դատավճռով ըստ էության հաստատվել է այն հանգամանքը, որ նշված հարաբերություններում Արշավիր Խալափյանը հանդես է եկել իր սուբյեկտիվ իրավունքների իրացման շրջանակում:

Վերոգրյալը հաշվի առնելով Խորհուրդն արձանագրում է, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում չեն հիմնավորվել իր կողմից վկայակոչած հանգամանքները, ինչով պայմանավորված չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Այս պարագայում, փաստաբան Արշավիր Խալափյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 6.1.1 ենթակետի 2-րդ մասի, 7.2.5 ենթակետի 2-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արշավիր Խալափյանի (արտոնագիր թիվ 731) նկատմամբ Կանոնագրքի 2.2.2, 2.2.3 և 2.6.1 ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված թիվ ԿԳ-14064 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Սիմոն Բաբայան

**18 փետրվարի 2020թ.
թիվ ԿԳ/54-Ա
ք. Երևան**